ՍՓՅՈՒՌՔՈՒՄ

ԱՎՍՏՐԱԼԻԱՅԻ ՀԱՅ ԳԱՂՈՒԹԸ

Քաղվածաբար հրատարակում ենք Ավստրալիայի հայ եկեղեցական խորհրդի 1957 թվականի նոյեմբերի 14 թվակիր Վեհափառ Հայրապետին ուղղված նամակից որոշ տեղեկություններ՝ Հեռավոր Արևելքի մեր եկեղեցական համայնքների գործունեության մասին։

Հեռավոր Արևելքի հայ գաղութների ազգային-եկեղեցական մարմինների ցանկությամբ և դիմումով, Վեհափառ Հայրապետի նոյեմբերի 25 թվակիր կոնդակով ստեղծվեց Հեռավոր Արևելքի երկրների՝ Հնդկաստանի, Չինաստանի, Ավստրալիայի, Նոր Զելանդիայի, Ինդոնեզիայի, Մալայայի և Բիրմայի Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու առաջնորդական վիճակ՝ Կալկաթա և Սիդնեյ առաջնորդանիստ կենտրոններով, և Հայրապետական նվիրակ ու առաջնորդ նշանակվեց գերապատիվ Տ. Ասողիկ եպիսկոպոս Ղազարյանը։—ԽՄԲ.։

Վեհափառ Հայրապետի հավանությամբ և հրամանով այս տարվա օգոստոս—նոյեմբեր ամիսներին Հեռավոր Արևելքի մի շարք հայկական գաղութներին և եկեղեցական համայնքներին հովվական այցելություն տվեց Տ. Դերենիկ եպիսկոպոս Փոլատյանը։ Սրբազանը օգոստոսի սկզբներին, Հնդկաստանի հայ գաղութը այցելելուց հետո, մեկնում է Բիրմա, Սինգապուր, Ինդոնեզիա, իր հետ տանելով հեռավոր այդ երկրներում ապրող հայ ժողովրդի բեկորներին՝ Ս. Էջմիածնի օրհնությունը և Վեհափառ Հայրապետի հայրական ողջույնը։

Օգոստոսի 6—12 օրերին, սրբազանը առաջինը այցելում է Մելբուռն քաղաքը, ուր երկիցս պատարագում է և քարոզում Անգլիական եկեղեցում։ Մելբուռնում հայերը դեռևս եկեղեցի չունեն։

Օգոստոսի 12-ին սրբազանը մեկնում է Ադելայիդ քաղաքը, ուր ապրում են հինգ հայ ընտանիքներ։ Տեղի հայ փոքրաթիվ համայնքը հոգեպես մխիթարելուց հետո, սրբազանը օգոստոսի 15-ին ժամանում է Սիդնեյ, ուր բնակվում են համեմատաբար ավելի շատ թվով հայ ընտանիքներ։ Սրբազանը իր հովվական այցելության ճանապարհի վրա ավելի երկար ժամանակով է մնում Սիդնեյում, ամեն կիրակի պատարագում է և քարոզում հայկական փոքր աղոթամատուռն մեջ, որը տրամադրվել է Ավստրալիայի հայ եկեղեցական խորհրդի նախկին ատենապետ պր. Ստեփան Բանիկյանի կողմից Սիդնեյի հայ եկեղեցական համայնքին։ Սրբազանը կարդում է մի շարք դասախոսություններ և կազմակերպում Ս. Էջմիածնից և Մայր Հայրենիքից տարած կինոժապավենների ցուցադրման երեկոներ, խանդավառություն ստեղծելով Սիդնեյի հայրենասեր և բարեպաշտ ժողովրդի հոգում։

Ավստրալիայի հայ եկեղեցական խորհրդի և Սիդնեյում վերջերս կազմված 15 հոգուց բաղկացած ժամանակավոր մի հանձնախմբի դովելի ջանքերի շնորհիվ, հոկտեմբերի 24-ին գնվում է Սիդնեյի ճիշտ կենտրոնում գտնվող Երիցյական Եկեղեցու եկեղեցիներից մեկը 3 500 անգլիական ոսկու արժողությամբ։ Նոր գնված եկեղեցում որոշ բարեփոխություններ մտցնելուց հետո, նոյեմբերի 10-ին, հանդիսավոր իրադրության մեջ և խանդավառ մթնոլորտում կատարվում է հայկական նոր եկեղեցու օծումը՝ Ս. Հա-

ությունն անունով, ձեռամբ Տ. Դերենիկ եպիսկոպոսի։

Եկեղեցու գնման փողը գոյացել է նախապես և վերջերս այդ նպատակով կատարված նվիրատվություններից։ Գաղութի սիրված և պատվավոր ազգայիններից պր. Հարություն Ակինյանը այս ուրախ առիթով եկեղեցու գնման ֆոնդի համար նվիրում է 2 000 անգլիական ոսկի։ Սիդնեյի նորոծ Ս. Հարություն հայոց եկեղեցու գնման իրենց համեստ մասնակցությունն են բերում նաև Մելբուռնի հայերը։

Սիդնեյում ազգային-եկեղեցական կյանքը դրվել է կազմակերպչական հուսալի հիմքերի վրա, շնորհիվ Ավստրալիայի հայ եկեղեցական խորհրդի աղգաշեն և իմաստուն ղեկավարության և ամբողջ գաղութի ներքին խաղաղ համերաշխության։

Բացի եկեղեցու գնումից, վարչությունը ծրագրել է գնել նաև Ս. Հարություն նորոծ եկեղեցու մոտ մի բնակարան՝ հոգևոր հովվի համար, մի սրահ՝ հայ գաղութին որպես ժամադրավայր և հավաքույթների տեղ, և մի քանի այլ սենյակներ՝ կիրակնօրյա դպրոցի համար։

Ավստրալիայի հայ եկեղեցական խորհուրդը ազնիվ պատրաստակամություն է հայտնել նաև եղբայրական օգնության ձեռք մեկնել Մելբուռնի հայերին, որպեսզի նրանք էլ մոտիկ ապագայում ունենան իրենց սեփական աղոթքի տունը՝ հայկական եկեղեցին, և նրա քովն ի վեր՝ հայկական դպրոցը։

Վերջերս Սիդնեյում կազմվել և Վեհափառ Հայրապետին է ներկայացվել ի վավերացումն՝ Հայ Եկեղեցու ոգուն և տեղական պայմաններին համապատասխանող մի համառոտ կանոնադրություն՝ նրանով ղեկավարելու համար գաղութի ազգային-եկեղեցական կյանքը, օրենքի սահմանների մեջ։ Սիդնեյում վերջերս նմանապես կազմվել է գործունյա և աշխատասեր հայուհիներից բաղկացած Եկեղեցասեր տիկնանց միություն։

Հոկտեմբերի 12-ին Սիդնեյում դումարվել է գաղութի ներկայացուցչական ընդհանար ժողով, որտեղ ընտրվել է Ավստրալիայի հայ եկեղեցական խորհրդի նոր կազմը։

Դերենիկ սրբազանը Սիդնեյ ժամանելուց առաջ իր ճանապարհի վրա սեպտեմբերի 21-ին այցելել է նախ Նոր Զելանդիա, ուր և մնացել է մինչև հոկտեմբերի 4-ը։ Նոր Զելանդիայում ապրում են 11 հայ ընտանիքներ, ցրված զանազան քաղաքներում։ Սրբազանը մեկիկ-մեկիկ այցելում է բոլորին, ամենուրեք կատարում է եկեղեցական պաշտամունք, սուրբ հաղորդություն է տալիս բոլորին և Բանին կենաց քարոզությամբ մխիթարում ամենքին։

Հոկտեմբերի 25-ին սրբազանը մեկնում է Մելբուռն, ուր պատարագում է և քարոզում։

Նոյեմբերի 2-ին և 9-ին, երեկոյան ժամերգությունից հետո, սրբազան հայրը դպրության, շրջ և ապա կիսասարկավագության աստիճաններ է շնորհում Մելբուռնում բնակվող ծանոթ ազգայիններից պր. պր. Ստեփան Բանիկյանին, Սարգիս Մարտինյանին, Վիլլի Եղիայանին և Աբրահամ Գայլանճյանին։

Մելբուռնից սրբազանը վերադառնում է Սիդնեյ և նոյեմբերի 17-ին իր հրաժեշտի վերջին պատարագն է մատուցում Սիդնեյի հայոց Ս. Հարություն եկեղեցում և ապա լավագույն տպավորություններով բաժանվում Ավստրալիայի պատվական հայ գաղութից և վերադառնում է Կայկաթա։